

Աւազանն ալ կոչուեցաւ Պասրիարֆին յիճը, այն պատճառաւ որ ստորերկրեայ ջրանցքով մը աւազանին ջուրը կը վազէր Հանամ եղ Պասրաֆ կոչուած աւազանը, որ Պատրիարքին բազանեաց աւազանն է կամ Եզեկիայի աւազանը:

Ծանօթ հնախօս Clermont-Ganneau իր մէկ գործին մէջ (տե՛ս Archeological Researches in Palestine, հատ. Ա. էջ 283-4) 614ի Պարսից կողմէն Երուսաղէմի գրաւման առթիւ տեղի ունեցած կոտորածը ու վերև մէջբերուած Առիւծին զերեզմանաւորի զրոյցը յիշելէ վերջ այս մասին հետեւեալ տարբերակը կը հաղորդէ՝ հեղինակէ մը առնելով. «Կոտորածէն յետոյ կու դայ ծերուռնի կին մը, որ իր հետ ունէր էգ շուն մը. կինը և իր շունը զոհերուն մարմինները կը տանին այլրը: Այս մարմինները չեն տարբաղազրուիր, մարտիրոսաց թափած արիւնը կը մնայ բոլորովին թարմ»:

Այն գողածև հողը՝ որ կը շրջապատէ աւազանը և որ ուռղեւով Գեհոնի ջուրերէն կազմած է կանաչազարդ մարգագետին մը, քաղաքին ուրիշ տեղերէ աւելի յարմարութիւն ստեղծած է թափիչներուն կամ լուացարարներուն խոնուելու հոն: Պիրքէթ Մամիւլայի մօտն է որ ուխտաւորները կ'այցելէին Թափիչին դաշը:

Մինչև ժ.Գ. դար, Քեփրոնի և Բեթղեհէմի միակ ճանապարհը կ'անցնէր Սիոնի լեռան դիմաց գտնուող բլուրին արևելքէն և կ'երթար Պիրքէթ Մամիւլայէն,

---

կամ է Eugesippus 1120ին, եւ կը հասկցուի թէ այր կոչուած է «Առիւծի քարայր», ինպէս կը գրէ Կիլեօմ Տուրացին՝ երբ մօտ աւազանը կը յիշէ (Han. F. էջ 131):